
ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԱՐՄԱՇԻ
ԴՊՐԵՎԱՆՔՈՒՄ (1887-1896 թթ.)

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Է. Ա.

Մակար Թեղուտցի կաթողիկոսը 1886 թ. ամռանը մի խումբ արևմտահայ և արևելահայ վարդապետների ձեռնադրում է եպիսկոպոս: Դրանց շարքում էին արևմտահայ հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքում առաջնակարգ տեղ գրաված Գարեգին Սրվանձտյանցն ու Մաղաքիա Օրմանյանը: Դեռևս 1860-1861 թթ. Սկրտիչ Խրիմյանի հետ Գ. Սրվանձտյանցը եղել էր Էջմիածնում, ծանոթ էր այնտեղի վարք ու բարքին, նույնիսկ «Արծուի Վասպուրականի» էջերում իր տպավորություններն էր կիսել արևմտահայ ընթերցողի հետ: Մ. Օրմանյանն առաջին անգամ էր լինում Էջմիածնում. այստեղ նրան հետաքրքրում էր ամեն ինչ, մանավանդ Գևորգյան ձեմարանը, դասավանդող ուսուցիչները, ձեմարանի ուսանողների գիտելիքները: Մակար կաթողիկոսի աչքից չի վրիպում Մ. Օրմանյանի հետաքրքրությունը և ուշադրությունը ձեմարանի նկատմամբ: Մասնավոր գրույցների ընթացքում շփվելով նրա հետ՝ Ամենայն հայոց հայրապետը ծանոթացել էր վերջինիս աստվածաբանական գիտելիքների հսկա պաշարին, դրա համար էլ նա առաջարկում է Մ. Օրմանյանին մնալ Էջմիածնում, ձեմարանում դասավանդել աստվածաբանություն առարկան: Մինչև այդ Մակար կաթողիկոսը մտահոգված էր, որ ձեմարանում հետին պլան են մղված աստվածաբանական գիտելիքները: Ճիշտ է նկատել Հ. Միրունին. «Մակար էր, որ հայ հոգևորականություն մը պատրաստելու մտահոգություն ունեցավ»: Այդ նպատակի համար նա ընտիր ուսուցչական կազմ հավաքեց ձեմարանում: «Եվ սակայն անոր ալ պակսեցավ բուն մարդը, որ պիտի կարենար հոգևորական նոր սերունդի մը կորիզը խմորել: Այդ անձը Օրմանյանը պիտի ըլլար...»¹: Չնայած իր մեծ ցանկությանը, Օրմանյանը, ներողություն խնդրելով, հրաժարվում է Էջմիածնում մնալու առաջարկից, որովհետև մինչև այդտեղ գալը հանձնարարություն էր ստացել Կ. Պոլսի պատրիարքից՝ վերադարձին մտնել Վասպուրական և քննել ամբողջ Արևմտյան Հայաստանում, նաև արևմտահայ մշակութային կենտրոն Կ. Պոլսում մեծ աղմուկ հանած պողոտյան-ապողոտյան երկարատև պայքարի հանգամանքները և համապատասխան զեկուցագիր ներկայացնել պատրիարքին²: Չցանկանալով տարաձայնությունների առիթ ստեղծել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում՝ կաթողիկոս Մակար Թեղուտցին թույլ է տալիս Օրմանյանին կատարել պատրիարքի հանձնարարությունը՝ առաջարկելով 1887 թ. ուսումնական տարին սկսելուն պես լինել Էջմիածնում՝ ձեմարանում դասախոսելու համար:

¹ Միրունի Հ. Ճ., Օրմանյան և իր ժամանակը [Էջմիածին, 1961, թ. 2 (հունիս ամիս), էջ 19]:

² Այդ մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. Ա, Ե., 1955, էջ 374-378, Կոստանոյան Է., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Ե., 2008, էջ 101-106:

Պատվով կատարելով պատրիարքի հանձնարարությունը՝ 1887 թ. ամռանն Օրմանյանը ստանում է կաթողիկոսի՝ իրեն Էջմիածին հրավիրելու և ձեմարանում դասավանդելու կոնդակը: 1887 թ. ուսումնական տարին Մ. Օրմանյանն սկսում է իբրև Գևորգյան ձեմարանի աստվածաբանության դասախոս: «Գևորգ կաթողիկոս իւր հիմնած և փայփայած և օժտած վարժարանական հաստատութեան հոգևոր ձեմարանի անուն և աստիճան էր տուած, բայց իւր օրով ո՛չ ձեմարանական բարձրութեան էր հասած և ո՛չ հոգևորականութեան էր ծառայած»³: 1874 թ. հիմնադրված ձեմարանը տվել էր բազմաթիվ շրջանավարտներ, որոնք ակնառու տեղ էին գրավում հայ հասարակական-մշակութային կյանքում, բայց... զարմանալի և տարակուսելի մի երևույթ, 13 տարվա գոյության ընթացքում ձեմարանը դեռևս չէր տվել ոչ մի հոգևոր սան, շրջանավարտներից ոչ մեկը չէր ձեռնադրվել որևէ հոգևոր աստիճանում: Գևորգի մահից հետո Մակար կաթողիկոսը ձեմարան հրավիրեց բարձրորակ ուսուցիչների. Արշակ Նահապետյան, Սեդրակ Մանդինյան, Փիլիպոս Վարդանյան, Ստեփան Պալասանյան, Սարգիս Գաբրիելյան, բայց նրանք Օրմանյանի բնորոշումով «հոգևորական ուսմանց ճիւղը» չէին կարող տալ. «Համալսարանական կրօնուսույցի մը պետքը կզգացնեն, Հոգևոր ձեմարանի ուսուցչական մարմինը լրացնելու համար»⁴: Այս հանգամանքը լիովին բավարարում էր ցարական կառավարության պաշտոնյաներին, մանավանդ Սինոդի դատախազին, քանի որ այդ վիճակում ձեմարանն ավելի հեշտությամբ կփակվեր իբրև աշխարհիկ ուսումնական հաստատություն⁵: Դեռևս մեկ տարի ձեմարանում դասավանդումը չավարտած՝ Օրմանյանն անգամ զգում էր. «Հոգևոր ձեմարանի մեջ կրոնական ուսմանց թուլութիւնը տեսնելով կառավարութիւնը կը բաղձար օգտուիլ անտի ձեմարանը փակել տալու»: Դրա համար էլ ն՝ Սինոդի դատախազը, ն՝ կառավարության մյուս ներկայացուցիչները հաշտ աչքով չեն նայում Օրմանյանի ներկայությանն ու գործունեությանը: Մինչդեռ Մակար Թեղուտցին անընդհատ քաջալերում է աստվածաբանության դասախոսի գործունեությունը: Փաստորեն, հոգևոր ձեմարանում տասը տարուց ավելի գործելուց հետո ավելանում է նոր, կրոնական ճյուղը: Բոլոր կուրսերում Օրմանյանը դասախոսում է աստվածաբանական գիտելիքներ՝ շաբաթական 24 ժամ: «Հարկ եղավ բնական աստուածաբանութիւնը սկսիլ հոգեբանութիւնն ալ խառնելով, ջատագովական ճիւղը լրացնել և տեսական ու բարոյական աստուածաբանութեանց անցնիլ. շաբաթական դաս մըն ալ Աւետարաններու ներածութեան յատկացուեցան երեք լսարանները համախմբելով, որոց շաբաթ երեկոներ բարոյախոսութիւն ալ կկատարէի

³ Օրմանեան Մ., Խոհք և խօսք, Երուսաղէմ, 1929, էջ 142:

⁴ Նույն տեղում:

⁵ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ), Թորոս Ազատյանի ֆոնդ, XII բաժին, գործ 11545:

եկեղեցական և աշակերտական կեանքի նիւթերով»⁶: Նա մասնակցում էր նաև եկեղեցու և վանքի աշխատանքներին, շարքային հոգևորականի նման ներկա էր լինում ժամերգությանը, սաղմոս էր ասում, Ծնունդի և Ավագ հինգշաբթի ծանրաշխատ օրերին, «երբ հոգևորականները կը փախչեն, վրաս առի սիրով...ատենաբանութենէն ալ փախչող չեմ և աշակերտաց ալ բարի օրինակ լինել պարտք է»,- գրում է Օրմանյանը⁷: Մակար կաթողիկոսը բարձր է գնահատում Օրմանյանի աշխատանքը և միշտ ողբորում ու գովում է նրան: Այդ աշխատանքը տալիս էր իր շոշափելի արդյունքը: Հենց 1887-1888 թթ. ուսումնական տարվա վերջին ձեռնարանի ողջ գոյության ընթացքում առաջին անգամ «չորս ուսումնավարտներ վանականութեան համար ուխտագիր տուին կաթողիկոսին...»⁸, և դրա մեջ ամենամեծ շնորհը պատկանում էր արևմտահայ նոր ուսուցչին: Նույնիսկ ձեռնարանի տեսուչ Արշակ Նահապետյանը կուսակրոնություն է ընդունում⁹:

Ձեռնարանում աշխատելու մեկ տարվա ընթացքում Օրմանյանն զբաղված էր ոչ միայն դասախոսություններով, այլև Մակար կաթողիկոսի խորհրդով «Արարատում» հանդես եկավ Հայ Առաքելական եկեղեցուն նվիրված հոդվածաշարով, որը կրում էր «Աթոռ Հայաստանեայց» խորագիրը և դրսևորում էր հեղինակի խոր իմացությունները Հայ Առաքելական եկեղեցու անցած ուղու մասին: Հոդվածաշարը ամբողջանալուն պես, դարձյալ կաթողիկոսի հանձնարարությամբ, լույս տեսավ առանձին գրքուկով՝ նույն խորագրով, և մեծ ընդունելություն գտավ ամբողջ հայ իրականության մեջ: Արխիվային վավերագրերը փաստում են, թե որ վայրից ինչքան դիմումներ են ստացվել այդ գրքուկներն իրենց ուղարկելու խնդրանքով¹⁰:

Մինչ նվիրյալ հոգևորականը դասախոսում էր ձեռնարանում, սինոդի դատախազը, Կովկասի կառավարչապետը, Պետերբուրգի օտար դավանությունների դեպարտամենտի ղեկավար Մոսալովը գործի են դնում ամեն ճիգ ու ջանք՝ Օրմանյանին Էջմիածնից հեռացնելու համար: Լուրը հասնում է նույնիսկ Կ. Պոլիս, Օրմանյանի արևմտահայ համակիրներին և գաղափարակիցներին: Մի ամբողջ ուսումնական տարի, երբ նոր դասախոսը մեծ նվիրումով կատարում էր իր գործը, նրա արևմտահայ բարեկամներն իրենց նամակներում հարցումներ էին ուղղում ձեռնարանի նոր ուսուցչի նկատմամբ ցարական կառավարության ունեցած բացասական

⁶ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 148:

⁷ ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, XII բաժին, գործ 11545, էջ 42:

⁸ Նույն տեղում, գ. 11546:

⁹ Մ. Օրմանյանը ձեռնարանում ունենում է հայտնի աշակերտներ, դրանց շարքում չի կարելի չհիշատակել Մեծի տանն Կիլիկիո ապագա կաթողիկոսին, 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ակտիվ մասնակից, XX դարի Ղևոնդ երեցին՝ Գարեգին Հովսեփյանին, որը մինչև իր կյանքի ավարտը շնորհակալության և երախտագիտության մեծ զգացումով էր լցված Մաղաթիա Օրմանյանի նկատմամբ: Այդ բարձր զգացումն արտահայտվեց հետագայում, 1908 թ. Էջմիածնում Օրմանյանին նվիրված գրքի հրատարակությամբ (տե՛ս **Հովսեփյան Գ.**, Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանեան և կաթողիկոսական ընտրություն, Թիֆլիս, 1911 թ., II հրատ.):

¹⁰ ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 7, գ. 868:

վերաբերմունքի մասին: Օրմանյանը, որը հենց սկզբից լսել էր իր նկատմամբ կառավարության բացասական վերաբերմունքի մասին, նամակներում ժխտողական պատասխաններ էր տալիս: Միայն ուսումնական տարվա վերջին (մայիսի 21/հունիսի 2) Հովհաննես ավագ քահանա Մկրյանին ուղղած նամակում Օրմանյանը խոստովանում է, որ մարտ ամսից իրեն հայտնի է ամեն ինչ, թեև կաթողիկոսը բոլորին հրահանգել էր իրեն ոչինչ չասել կառավարական պաշտոնյաների այդ ընթացքի վերաբերյալ: Նա կաթողիկոսի մոտ ցույց չէր տալիս, թե գիտի ամեն ինչ և մեծ նվիրումով շարունակում էր դասախոսությունները: Նույն այդ նամակում Օրմանյանը մանրամասն պատմում է ցարական կառավարության՝ իրեն Էջմիածնից հեռացնելու ուղղությամբ կատարված քայլերի, կաթողիկոսի հակաքայլերի մասին: Պատրվակելով Օրմանյանի օտարահպատակ լինելը՝ ցարական պաշտոնյաները ցանկանում են նրան հեռացնել Էջմիածնից, իսկ կաթողիկոսը պնդում էր իր իրավունքները՝ նշելով, որ Ամենայն հայոց վեհափառն իրավունք ունի բոլոր օտարահպատակ, «մանավանդ ուխտեալ եպիսկոպոսների» աշխատանքի հրավիրելու Էջմիածնում: Կաթողիկոսը հրահանգել էր ձեմարանի աշխատակիցներին Օրմանյանին ոչինչ չասել ցարական պաշտոնյաների այդ քայլերի մասին, իսկ վերջինս աշխատում էր մեծ նվիրումով և չէր արտահայտում իր մտահոգությունները: Նրա գործունեության մասին «կաթողիկոս և եպիսկոպոսներ, տեսուչ եւ ուսուցիչներ, եւ ամենուն խորհրդականներ այն համոզումն ունին, որ եթե Օրմանեան հեռանա, ձեմարանն ալ փակուած կը լինի: Մինչեւ հիմա, կըսեն բան հասկցողները, կրօնական ճիւղ չունիր եւ չունենալնիս քիչ կիմանայինք, այժմ, որ կրօնական ճիւղը մտավ, եւ տեղը ուրիշը չկա, որ շարունակէ, եթէ հեռանա, հոդ է, թէ ձեմարանին հոգին կելնէ, այլեւս հոգեւոր ձեմարան չմնար»¹¹: Օրմանյանի հետ շփվող Էջմիածնի հոգևորականներն ընդգծում են, որ նա «ձեմարանը քրիստոնեայ» արավ, նույնիսկ հորդորում են նրան. «Դուն ժամ մի գա, ժամը մեզի, ձեմարանը քեզի ժամ է»: Օրմանյանի դասախոսությունները ձեմարանում, աստվածաբանական քարոզները, ուսանողներին հոգևորական ոգով տոգորելը բացահայտ զգում են ոչ միայն էջմիածնականները, այլև «պրոկուրորն եւ նաչալնիկն» (ցարական պաշտոնյաները): Մինչ Օրմանյանն աշխատում էր մեծ նվիրումով և իր արևմտահայ մտերիմներին հայտնում էր, որ ուսումնական տարվա ավարտին՝ արձակուրդի ժամանակ, մտադիր չէ Պոլիս գնալ, այլ ցանկանում է օդափոխության մեկնել արևելահայ որևէ հաճելի վայր, ապա բարձրանալ փոքր Մասիսը, ցարական պաշտոնյաները կաթողիկոսին հեղեղում են սպառնալի գրություններով և պահանջում Օրմանյանին հեռացնել ձեմարանում պաշտոնավարելուց, նաև ընդհանրապես Արևելյան Հայաստանից: Կաթողիկոսը համառորեն դիմադրում է: Տեսնելով, որ գրություններն ու սպառնալից պահանջները արդյունք չեն տալիս, օտար դավանության դեպարտամենտի ղեկավար Մոսալովը երկու պաշտոնյա է ուղարկում կաթողիկոսի մոտ: Արդեն 1888 թ. հունիսին պարզ է դառնում, որ «Պետերբուրգէ կայ-

¹¹ ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., XII քաժին, գ. 11545:

սեր կողմանէ քննիչներ կ'սպասուին Էջմիածնայ գործերը նայելու. արդէն Տփղիս են եւ անտի այսօր վաղը կը մեկնին»¹²: Էջմիածին եկած ցարական պաշտոնյաների ուժգին ճշման ներքո Վեհափառ հայրապետը ստիպված զիջում է. «...կաթողիկոսն ստիպեալ էր տեղի տալ առաջին բուռն զօրութեան յատուկ պատգամաւորի ցարին, որ բացարձակ կամոք կամէր զհեռացումն Օրմանեանի, հակառակ ամենայն համոզկեր փաստից... կաթողիկոսն պարտաւորուեցաւ տեղի տալ առաջին բուռն զօրութեան, երբ սպառուեցան ամենայն միջոցք»¹³: Մեր կարծիքով ճիշտ չէ Օրմանյանը՝ գրելով, թե իրեն հեռացրել են օտարահպատակ լինելու պատճառով: Ճիշտն այն է, որ ցարական պաշտոնյաները նստեղյակ էին նրա մասնակցությանը Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության գործունեությանը և կարծում էին, որ Արևելյան Հայաստանում վերջինս կօժանդակի նման կազմակերպության ստեղծմանը:

Արդէն 1888 թ. հուլիսի վերջին Օրմանյանը ստիպված հեռանում է Էջմիածնից: Ընդամենը մեկ ուսումնական տարի է Օրմանյանը դասավանդում Էջմիածնի ճեմարանում և այդ ժամանակը նա բարձր է գնահատում. «կեանքիս երջանկագոյն օրերն եղան, վարչականէ ազատ գրականի նուիրեալ պատուաւ եւ հանգիստ կերպով Էջմիածին անցածներս: Ցաւով բաժանուեր էի Էջմիածնէն, ոչ միայն անհատական կեանքիս, այլև հայ եկեղեցականութեան զարգացման համար աշխատութենէ զրկուելուս տեսակետէն: Փափաք ունէի եւ կաթողիկոսին հաւանութիւնն ալ ստացած էի, ճեմարանի աշակերտութեան կէտը Տաճկահայերէն առնել եւ ազգին երկու մեծ բաժիններուն մեջ աշխատող եկեղեցականներու միջեւ եղբայրակցութիւնը քաջալերել եւ համերաշխութիւնը արծարծել»¹⁴:

Մեկ տարի նա մնում է Կ. Պոլսում: Պատրիարքարանից և Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից նա առաջարկություններ է ստանում հոգևոր առաջնորդի պաշտոն կատարելու համար, բայց դեռևս չի տալիս իր համաձայնությունը: Այդ ընթացքում Կ. Պոլսի նորընտիր պատրիարք Խորեն Աշրգյանը հրավիրում է անվանի հոգևորականների խորհրդակցություն՝ հայ եկեղեցու բարենորոգումների խնդիրը քննարկելու համար: Խորհրդակցության հրավիրված Մ. Օրմանյանն անում է կարևոր առաջարկություն. բարենորոգումներ անելուց առաջ անհրաժեշտ է պատրաստել կարող և ունակ հոգևորականներ, հայ եկեղեցուն արժանավայել սպասավորներ: Պատրիարքը համաձայնում է այդ առաջարկին, որոշվում է հոգևորականների նոր սերունդ աճեցնելու համար Դպրեվանք բացել (յուրատեսակ հոգևոր ճեմարան): Ստեղծվում է եկեղեցական վարժարանի հանձնաժողով՝ Օրմանյանի նախագահությամբ: Հանձնաժողովի մյուս անդամներն էին Աբիկ Ունճյանը, Տիգրան Յուսուֆյանը, Հովհաննես Եսայանը, Պատրիկ Կյուլպենկյանը և Գաբրիել Գաբրիելյանը: Սկզբում մտածում են Դպրեվանքը բացել Կ. Պոլսում, սպա հանգամանակից

¹² Նույն տեղում, գ. 11546:

¹³ Նույն տեղում, գ. 11547:

¹⁴ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 149:

քննարկումից հետո պատրիարք Աշրգյանն առաջարկում է Դպրեվանքը բացել Արմաշի վանքում: 1889 թ. պատրիարքական կոնդակով, Կենտրոնական վարչության Խառն ժողովի որոշմամբ Դպրեվանքը բացվում է Արմաշի Ս. Աստվածամոր Զարիսափան վանքում, որի անփոփոխ վանահայրը պատրիարք Խ. Աշրգյանն էր: Ս. Օրմանյանը դառնում է վանքի փոխվանահայր և Դրպրեվանքի տեսուչ: Դպրեվանքի խնամակալության ատենապետն է դառնում Տիգրան Յուսուֆյանը, բայց ըստ Օրմանյանի՝ «բուն խնամակալը Աբիկ Ունձեանն էր, որ հոգևով ու եռանդով, հսկողությամբ ու օգնությամբ ամեն գործառնությամբ վարիչ էր...»¹⁵: Ստեղծվում է 7 տարվա ուսումնական ծրագիր, առաջին երեք տարում կրոնական ճյուղերի ընդհանուր դասընթաց էր՝ նոր Կտակարանի ներածության, տոների և ծեսերի բացատրության, քրիստոնեական ընդհանուր գիտելիքների հիման վրա: Այդ դասընթացն այնպես էր կազմված, որ այն ավարտողները կարողանային «վարժապետությիւնը կամ քահանայությունը արժանապէս վարել»: Երկրորդ եռամյան անցնողներն այն ուսանողներն էին, որոնք հանձն էին առել կուսակրոնություն ընդունել և սարկավագ ձեռնադրվել. նրանք պետք է անցնեին փիլիսոփայության և աստվածաբանության մասնագիտական դասընթացը՝ կատարելագործելով առաջին եռամյայի հայկաբանական և լեզվագիտական ճյուղերը: Վեցերորդ տարին ավարտողներն ընդունելու էին «քահանայական ձեռնադրությիւն»՝ մի տարի ևս աշխատելով ավարտաճառի վրա, ապա «վարդապետական գաւազանի օրհնութեամբ... գործնական ասպարէզ կը մտնային Կ. Պոլսոյ պատրիարքարանին տրամադրութեան ներքեւ»¹⁶:

Դպրեվանքի գործունեությունն սկսվում է 1889 թ. ուսումնական տարում: Սեպտեմբերի 28-ին Հովհաննես ավագ քահանա Մկրյանին ուղղած նամակում Օրմանյանը հայտնում է Դպրեվանքում սկսած իր նոր աշխատանքի մասին. «...վարժարանի կարգադրությիւնք զիս կը զբաղեցնէ անդուլ և անդադար: Առայժմ ամենայն ինչ յաջող կը փայլէ աստ. լավ յարաբերությիւնք, հաւասար եռանդ և աշակերտաց կողմանէ պատրաստակամությիւն: Վարագայ խաչէն յետոյ»¹⁷ կարելորդ դասեր պիտի սկսին: Սկզբում դեռ ինչ ինչ պակասություններ ունիմք, մանաւանդ տաճկաբան չունիմք: Ամեն բան ի միասին առեալ վարժարաննիս բաւական գողտրիկ ձեւ առաւ, եթէ ներքինն ալ արտաքնոյն նմանի, կարող եմք գոհ լինել»¹⁸: Օրմանյանի օգնական և Դպրեվանքի փոխտեսուչ է դառնում Եղիշե վարդապետ Դուրյանը: Նվիրյալ հոգևորականները միասին ձեռնամուխ են լինում Դպրեվանքի գործունեության կարգավորմանը: Դպրեվանքի տեսուչը հետաքրքիր գնահատական է տալիս իր աշխատանքին. նշելով, որ տասնյակ տարիների ընթացքում տարբեր

¹⁵ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 154:

¹⁶ Նույն տեղում, էջ 156:

¹⁷ Խոսքը վերաբերում է Վարագա Ս. Խաչի տոնին, որ միշտ նշվում էր սեպտեմբերի վերջին կիրակին:

¹⁸ ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11553:

նպատակների է ծառայել, ուրախությամբ արձանագրում է, որ վերջապես հասել է իր ազգին իսկական ծառայություն մատուցելու ժամանակը. «Ամենուն միացեալ գործութեամբ եկեր եւ նոր գործ մը գործել և Հայաստանեայց եկեղեցոյ մշակներ պատրաստել»: Նա քննադատական հայացքով վերլուծում է իր ողջ գործունեությունը. «...Անտօնեան միաբանութեան վանական, Հռոմայ համալսարանին աշակերտ, կաթոլիկ միաբանութեան վարդապետ, հակահասունեան խնդրոյն շահատակ, հակապապական գրուածոց հեղինակ, հայոց եկեղեցոյ եպիսկոպոս, Կարնոյ վիճակին առաջնորդ, Մայր Աթոռոյ ճեմարանին ուսուցիչ, այսպէս իրարու անյարիր վիճակներու մէջ մարգեալ, ի հակառակաց լծեալ փորձառութեամբ տեսնինք, թէ ինչ պիտի կարենանք կատարել»¹⁹: Նշելով իր անցած զիգզագ ճանապարհը, դիտարկելով, որ իր մտերիմներն առավել բարձր են գնահատում Գևորգյան ճեմարանում կատարած աշխատանքը, Օրմանյանը խորհում է, որ անցած ուղու բոլոր փուլերն էլ ինչ-որ ձևով նպաստում են իր գործունեությանը: Նա մտորում է, որ արդեն մեկ ամիս բացված Դպրեվանքը իրականում բացվել է կես ամիս առաջ, սակայն ոչ բոլոր ուսանողներն ունեն իրենց զգեստները, ուսուցչական խումբը դեռ չի ամբողջացված, բոլոր ուսանողները չէ, որ ունեն դասագրքեր, բայց նոր ձևով կերպարանափոխված վանքն արդեն ունի նոր վարժարան: Օրմանյանի արտահայտությամբ «երկունքի և փոփոխութիւնների մէջ» գտնվող Արմաշի վանքը շուտով կընդունի «հաստատուն կերպարանք»: Հ. Մկրյանին նա խոստովանում է, որ պարտավորություն է վերցրել անձամբ անել ամեն ինչ: Դպրեվանքն աստիճանաբար տալիս է նորընծա կուսակրոն հոգևորականներ, որոնցից մեկին՝ Մկրտիչ արեղա Աղավնունուն, իր հանձնարարականներն ու խորհուրդներն է տալիս փոխվանահայրը՝ Դպրեվանքի ղեկավարը: Նշելով հոգևորականի՝ ժողովրդին ու վանքին ծառայելու նպատակը, Օրմանյանը փաստում է, որ նրանց շարքում կան այդ «օրենքը անարգողներ», որը պատճառ է դառնում «հոգևորական դասուն դեմ բարձրացեալ մեղադրանաց»²⁰: Ըստ Օրմանյանի՝ քահանայության նպատակը և բարձրությունը ժողովրդին ծառայելու, վանականությանն ու վեղարին հավատարիմ մնալու մէջ է: Ով չի կատարում այդ պարտականությունները, ուրեմն նա շեղվել է իր ճանապարհից: Ժամանակի ոչ մի իրադարձություն Օրմանյանին չի շեղում Դպրեվանքի աշխատանքները կարգավորելու հոգսերից: Ձեռք ձեռքի տված Եղիշե Դուրյանի հետ՝ նրանք ամեն ինչ անում են Դպրեվանքը բարձր մակարդակի վրա պահելու համար: Այդ ընթացքում նրանք կապ են հաստատում հայկական նույնիսկ հեռավոր գաղթավայրերի հետ՝ այնտեղից աշակերտ բերելու, արժանավոր հոգևորական պատրաստելու և իր տեղն ուղարկելու համար: Այդ առիթով էլ Օրմանյանը շնորհակալություն է հայտնում Հ. Մկրյանին, որ նրա շնորհիվ Կալկաթայից աշակերտ պետք է ունենան²¹: Դպրեվանքի տեսուչն

¹⁹ Նույն տեղում, գ. 11554:

²⁰ Նույն տեղում, գ. 11563:

²¹ Նույն տեղում, գ. 11578:

առանձնապես գոհ է Դուրյան հայր սուրբի աշխատանքից, որը, ըստ Օրմանյանի, «իր կեանքը կը սպառէ ի դասի և դասարանի», կարծես թե դարձել է «մենակեաց և անապատակեաց»: Դպրեվանքի հաջողություններն ակնհայտ դարձնելու համար Օրմանյանն աշխատում էր բոլոր առարկաների դասավանդումը հասցնել բարձր մակարդակի: Նա առանձնապես ջանք էր գործադրում օտար լեզուների ուսուցումը կարգավորելու, լավ ուսուցիչներ գործի մեջ ներգրավելու համար: Նրան հաջողվում է վարժարանի վերջին դասարանում անգլերենի ուսուցումը ուժեղացնել, մտցնել նաև իտալերեն և գերմաներեն. «այսպես լեզուական հմտություններն կաշխատինք ընդարձակել»²²: Նրա ջանքերն ուղղվում են նաև բնական գիտությունների ճյուղի համար նոր մասնագետներ հրավիրելու գործին: Նա աշխատում է վարժարանն ավարտած ուսանողներին ուղարկել արտասահման՝ աստվածաբանական ճյուղը բարձր մակարդակի հասցնելու նպատակով: Նրա կարծիքով ավելի ճիշտ է ուսանողներին ուղարկել «Գերմանիո և Անգղիո համալսարանները», որոնք «կրօնական և իմաստասիրական և քննաբանական առումով ավելի լուրջ են», քան «նոր աշխարհի» (նկատի ունի ԱՄՆ – Կ. Է.) ուսումնական հաստատությունները: Քննարկելով Բոստոնի, Ֆիլադելֆիայի և Նյու Յորքի ամերիկյան սեմինարիաների (ձեմարան կամ Դպրեվանք) ուսումնական ծրագրերը՝ գտնում է, որ հայ երիտասարդները արտասահման պետք է մեկնեն միայն կատարելագործման նպատակով. «Ըստ իս էական է, որ նախ մեր ընթացքը հայկական ոգով ու հայկական ճաշակով ավարտի և յետքը անոր վրա զգենումք օտարը: Առաջին ու նախնական ընթացքը օտարաց ձեռքով ընել տալու կողմնակից չեմ»²³:

Օրմանյանի ջանքերն ուղղված էին իր սաների մեջ ուժեղացնելու սերը Դպրեվանքի նկատմամբ: 1890 թ. լրանում էր Արմաշի վանքի վերանորոգության և ուխտի սուրբ տաճարի կառուցման 75 տարին: Քանի որ այդ տոնակատարությունը սաների և ուսուցչական կազմի մեջ կբորբոքեր հայրենասիրության և հավատքի եռանդ, Օրմանյանը կազմակերպում է մեծ տոնախմբություն՝ «ի պատիւ ամենաօրհնեալ և հրաշագործ Չարխապիան Ս. Կուսին», երբ վանքի մեջ հաստատվել է նոր միաբանություն և նոր վարժարան: Տոնակատարությունը տևում է 1890 թ. հունիսի 2-ից մինչև 10-ը: Բազմաթիվ հրավիրյալներ Կ. Պոլսից մասնակցում են հանդեսին:

Օրմանյանը չի բավարարվում հին վարժարանի շենքում աշխատելով: Իբրև «գերագոյն աւետիս» նա հաղորդում է Հ. Մկրյանին, որ 1892 թ. գարնանը ձեռնամուխ է լինելու վարժարանի նոր շենքի շինությանը²⁴, քանի որ իր կոչումը Դպրեվանքին ծառայել է, հոգևորականների նոր և կրթված սերունդ աճեցնելը: Շուտով ակնհայտ են դառնում Դպրեվանքի տեսուչի աշխատանքի պտուղները. եռամյա կրթություն ստացած ավագ սարկավագները, ըստ հոգևորական օրենքների, ընդունում են «կուսակրոն քահանայություն և յաբեղայություն»: Ընծայացումներն ըստ օրինի ստանում

²² Նույն տեղում, գ. 11604:

²³ Նույն տեղում, գ. 11523:

²⁴ Նույն տեղում, գ. 11598:

են իրենց ընծայության գիրք: «Ընծայեալք էին Ներսես, Մարգիս, Շնորհալի, Դավիթ և Մկրտիչ ավագ սարկավագները»²⁵:

Արմաշում աշխատելու ողջ ընթացքում Օրմանյանը չի մոռանում Գևորգյան ձեմարանում մեկ ուսումնական տարի իր աշխատանքային գործունեության մասին. իր խոհերն ու մտորումներն է հայտնում համակիրներին և մտերիմներին, ընդգծում Մակար կաթողիկոսի՝ ձեմարանի հոգևորական ճյուղը բարձրացնելու և ընտիր հոգևորականներ պատրաստելու ցանկությունը, ուրախանում է, որ ձեմարանի գոյությանը վտանգ չի սպառնում ցարական կառավարության կողմից: Հիմնական վտանգը նա տեսնում է «ձեմարանի նախկին աշխարհական ձևի մեջ» և գովեստով նշում է, որ Մակար Թեղուցցին ջանք չի խնայում «թոթափել ծրագիրներէ նախկին աշխարհական ձեւը եւ բոլորովին եկեղեցականի վերածել»²⁶: Նրան հուզում է այն հանգամանքը, որ ձեմարանի երեք լսարաններ ուզում են միացնել դասախոսության խնայողության համար. ըստ նրա՝ դա կարող է խախտել «ուսման աստիճանաւորութիւնը եւ չի հաշվի առնուելու առարկայի սկիզբը և վերջը»²⁷:

Արմաշում գտնվելու ամբողջ ընթացքում Օրմանյանի ուշադրությունից չի վրիպում Էջմիածնում կատարվող ոչ մի դեպք: Նա առանձնապես ծանր է տանում Մակար կաթողիկոսի մահը (1891 թ.) և ակնդետ հետևում է նոր կաթողիկոսի ընտրության իրադարձություններին, նախապատրաստական աշխատանքներին, ընտրապայքարին, գնահատականներ տալիս կաթողիկոսական բոլոր թեկնածուներին, քննարկում Արիստակես Սեդրակյան և Սուքիաս Պարզյան վեճերը՝ սրամտորեն այն համեմատելով «Դավիթ-Դանիելյան» վեճի հետ: Կաթողիկոսական ամբողջ ընտրապայքարի ընթացքում (1891 թ. մայիսից մինչև 1892 թ. մայիս) Օրմանյանը հետևում է Էջմիածնի իրադարձություններին: Երեմիա Գալստյան, Սուքիաս Պարզյան, Արիստակես Սեդրակյան, Էջմիածնում պայքարի մեջ նետված պատկառելի եպիսկոպոսների մի մեծ խումբ դառնում են Օրմանյանի քննարկումների, գնահատականների և վերլուծությունների առարկան: Հ. Մկրյանին գրած նամակներում ինքն առաջադրում է նոր թեկնածուների անուններ, հավանություն տալիս Ս. Պարզյանի՝ արևմտահայ թեկնածուներից կաթողիկոս ընտրելու առաջարկին: Նշելով, որ Մ. Մուրադյան և Մ. Խրիմյան եպիսկոպոսները հաշվից դուրս են (իբրև նախկին կաթողիկոսական ընտրելի), Օրմանյանն առաջադրում է նաև Խ. Աշրգյանի. Մ. Բզմիրյանի և Հ. Վեհապետյանի թեկնածությունները: Մինչ այդ քննարկվում էր այն հարցը, թե արևմտահայերից ո՞վ պետք է պատգամավոր ընտրվի կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու համար: Ընտրությունները պետք է տեղի ունենային 1892 թ. մայիսին: Արևմտահայ հասարակական և հոգևոր գործիչների մեծ մասը հակված էր Մ. Օրմանյանին ուղարկել Էջմիածին՝ իբրև կաթողիկոսական ընտ-

²⁵ Նույն տեղում, գ. 11653:

²⁶ Նույն տեղում, գ. 11571:

²⁷ Նույն տեղում, գ. 11523:

րության պատգամավոր: Օրմանյանը չի ցանկանում թողնել իր աշխատանքը և իբրև պատգամավոր, որը պետք է արտահայտի արևմտահայ ընտրողների կարծիքը (իսկ ընտրողը՝ սուկ իրենը), մեկնի Էջմիածին: Հ. Մկրյանին գրած նամակում նա հայտնում է, որ չի ցանկանում Արմաշից հեռանալ, քանի որ եթե հաշվի չառնի «վանահայրական զբաղմունքը, վերատեսչական պարտքը», չի ուզում խաթարել «ուսուցչական գործը», որովհետև շաբաթական 25 ժամ դասախոսում է և կես ուսումնական տարին մեծ վնաս կհասցնի իր ուսանողներին. իր բացակայությունը նշանակում է «աշակերտաց տարեկան ընթացքը ջղակոտոր հանել»²⁸: Էջմիածին գնալուց հրաժարվելու պատճառներից մեկն էլ համարում էր տեղի իրական կացությանը քաջածանոթ լինելը (կարծես թե ակնարկում էր, որ կարող են լինել անարդար ընտրություններ): Չնայած իր հրաժարականին, Կ. Պոլսո պատրիարքն այն չի ընդունում, որովհետև Էջմիածին մեկնելու փաստաթղթերն արդեն պատրաստելու ընթացքի մեջ են, արտաքին գործոց նախարարը պաշտոնապես դիմել էր մեծ եպարքոսին և «պաշտոնագիրն ալ կազմել տուած են»²⁹: Օրմանյանն ստիպված էր համակերպվել: Նա 1892 թ. ապրիլին մեկնում է Էջմիածին՝ վանահայրական պաշտոնի փոխանորդությունը հանձնելով Ներսես ծայրագույն վարդապետ Բարթողիմեոսյանին, վարժարանի վերատեսչական փոխանորդությունը՝ Եղիշե վրդ. Դուրյանին: 1892 թ. մայիսի 5-ին Էջմիածնում տեղի են ունենում կաթողիկոսական ընտրությունները և 72 քվեով Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում Մկրտիչ Խրիմյանը³⁰:

Որոշ ժամանակ անց Օրմանյանը վերադառնում է Արմաշ և վերսկսում իր աշխատանքները: Նա գործնական աշխատանքներ է սկսում Դպրեվանքի անունով հոգևոր մամուլ հրատարակելու ուղղությամբ: Պոլսահայ մամուլի բազմաթիվ օրգաններից նրան առաջարկում էին ուղարկել ցանկացած հոդված, և իրենք կհրատարակեն: Օրմանյանը մերժում է բոլոր առաջարկները և հայտնում է իր բուն նպատակը. «...Չուտ կրօնական թերթ մը հիմնել, որուն խմբագրականը ամբողջ մեք պիտի կարգադրիմք, ուղղութիւնը մեք պիտի տամք, հոգին մեք պիտի շնչենք, ոչ շահու նպատակ ունեցող և ոչ աւելի ծախուող ձեւերու հետեւելով»³¹: Երկար ժամանակ և մեծ ջանքեր են պահանջվում թերթ հրատարակելու համար: Տարբեր օրգաններին հղած առաջարկները մերժվում են, սակայն Օրմանյանը համառորեն շարունակում է աշխատանքն այդ ուղղությամբ: Նրա ուշադրության կենտրոնում Ություճյանի «Մասիս» էր, որի համար պատրաստ էր իր վրա վերցնել և՛ «մատակարարութիւնը, ե՛ւ վար-

²⁸ Նույն տեղում, գ. 11581:

²⁹ Նույն տեղում, գ. 11582:

³⁰ Թուրքական կառավարությունը չէր ազատում Երուսաղեմի արքայական թուրքահայատակ Խրիմյանին, արգելք դնելով նրա կաթողիկոսական ընտրության վավերացմանը: Միայն ռուսական ցարի անմիջական միջամտությամբ նա ազատվեց արքայից և ընտրությունից 17 ամիս անց նա օծվեց Ամենայն հայոց կաթողիկոս (տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2008, էջ 349-352:)

³¹ ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, XII բաժին, գործ 11604:

չութիւնը, ե՛ւ պատասխանատուութիւնը»: Արմաշում աշխատող Օրմանյանը խնդրում է Կ. Պոլսի իր մտերիմ բարեկամին՝ Հովհ. Մկրտչյանին. «Մասիսը» կերպով մը ձեռնարկի անցուցէք. և դպրեվանաց խմբագրութեամբ և Ձեր մատակարարութեամբ լուրջ հանդէս մի հանիմք...»³²: Ի վերջո, Օրմանյանին հաջողվում է կարգավորել «Մասիսը» իբրև կրօնական շաբաթաթերթ հրատարակելու գործը. այն պետք է հրատարակվեր Կ. Պոլսում, որտեղ ամեն շաբաթ Օրմանյանը նյութերը պետք է ուղարկեր նույնիսկ հավելումով: Թիվ 1-ը պետք է լույս տեսներ 1896 թ. մայիսի 18-ին: Մկրտչյանին ուղղված նամակում Դպրեվանքի տեսուչը մանրամասն նշում է թիվ 1-ի բովանդակությունը: Այդ հոդվածներն էին.

«յառաջարան-կրօնաթերթ մը.

կրթական-պէտքը.

կրօնական-կրօնի բարոյական.

քարոզի նիւթ-սնամէջ մտքեր.

Ս. Գիրք-ընթերցում Ս. Գրոց.

ծիսական-ժամագիրք

Ս. Գիրք-Մաղմոս, Հռիփսիմեան կուսանք, կանոնք եկեղեցւոյ»³³:

Մայիսի 18-ին նախատեսված համարը լույս է տեսնում հունիսի 1-ին: Դրանից հետո Արմաշում գտնվող հոգևոր շաբաթաթերթի խմբագիրը շաբաթվա սկզբին ուղարկում էր ամսագրի բոլոր հոդվածները Կ. Պոլիս և հայտնում, որ իր հոդվածների տակ պետք է ստորագրի «երեք սկզբնատառերով Մ.Ե.Օ. ձևով» (Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյան): Եթե թիվ 1-ում հոդվածների մեծ մասի հեղինակը խմբագիր հրատարակիչ Օրմանյանն էր, ապա հաջորդ թվի հեղինակները Դպրեվանքի վարժարանի հոգևորականներն էին, որոնք վարդապետ էին օձվել, այդ պատճառով հրահանգվում է բոլոր անուններից հետո գրել վ. (այսինքն՝ վարդապետ): Կրօնական շաբաթաթերթի վերաբերյալ, ըստ երևույթին, դիտողություններ են լինում, որի մասին Հ. Մկրտչյանը հաղորդում է Օրմանյանին: Վերջինիս պատասխանը լիովին բնութագրում է նրա գործելակերպը: Ընդունելով նյութերի և լեզվի համար կատարած դիտողությունները՝ նա պատասխանում է, որ դա խիստ անձնական մտեցում է. ամեն մեկն ունի իր ոճը, և ինքը չի ուզում դրանք խառնված տեսնել: Խորհելով, որ ինքն ու իր սաներն ունեն իրենց յուրահատուկ ոճը և լեզվի համար երբեք «անարգանք» չեն կրել, Օրմանյանն ընդգծում է, որ ժամանակը կհարթի ամեն ինչ, և Դպրեվանքի շաբաթաթերթը կստանա «իւր ձեւն ու ուղղութիւնը»: Միևնույն ժամանակ նա արգելում է Դպրեվանքի հեղինակներից գատ ալլ հեղինակների հոդվածները տպել՝ «դուրսէն յողուած մի խոթէք»: Շաբաթաթերթի հրատարակությունն աստիճանաբար ընկնում է հունի մեջ: Ամեն շաբաթ Օրմանյանը 7-11 հոդված Արմաշից ուղարկում է Կ. Պոլիս նոր՝ հաջորդ թվի հրատարակության և նույնիսկ պահեստային նյութեր: Մակայն Օրմանյանին հետաքրքրում էր ոչ միայն

³² Նույն տեղում, գ. 11638:

³³ Նույն տեղում, գ. 11643:

Դպրեվանքի օրգան «Մասիսը», այլև հայ մամուլի տարբեր օրգաններ, առավելապես Էջմիածնում հրատարակվող «Արարատը», որտեղ զետեղվում էին Մայր Աթոռին, Էջմիածնի ձեմարանին և հոգևոր դասին վերաբերող բազմաթիվ նյութեր: Այդ պատճառով և դրանց շնորհիվ Օրմանյանը մշտապես կապ էր պահպանում տեղի միաբանության և ամսագրի խմբագրակազմի անդամների հետ, այնպես որ Դպրեվանքը ամսագրի ամենահավատարիմ բաժանորդն էր: Մակայն արդեն 1895 թվականն էր. հայոց պատրիարքը Մատթեոս Իզմիրյանն էր, որի օրոք ուժգնանում են հալածանքներն արևմտահայության նկատմամբ: Օրմանյան կառավարությունն արգելում է այլ երկրներից, առավել ևս Արևելյան Հայաստանից գրականություն կամ մամուլ ստանալը: Օրմանյանը տեղեկանում է, որ «օսմանեան թղթետանը նոր կանոն է սկսած, ոչինչ արտասահմանի հրատարակություն չտանեք եւ ոչ ուրեք, ուստի ինչ որ իւր ձեռքը կանցնի ու կերթան կը կորսուին, եւ որովհետեւ ընդ մէջ Պոլսոյ և Նիկոմեդիոյ ուրիշ ճամպայ չկա, բան մը ընդունելու յոյս ալ չկա»³⁴: Ուրիշ ոչինչ չէր մնում, քան մասնավոր անձանց միջոցով ստանալը, բայց նրանք ևս ենթարկվում էին խիստ խուզարկության: Իբր անդորրություն հաստատելու նպատակով կառավարությունը «հեծեալ և հետեւակ զինուորներ կը շրջեցնէ կամ կը սփռէ զանազան կողմեր», բայց նրանք ավագակներից ավելի վատ են վերաբերվում հայ գյուղացիների հետ: Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղած նամակում Օրմանյանը տեղեկացնում է, որ իրենց տարածքում տեղի բնակչության անվտանգությունն ապահովելու համար շրջող զինվորները համագործակցում են «զինեալ գողերու և չերքեզներու հետ». հենց այդ ժամանակ նրանք Արմաշի հայ պահակների ձեռքից «խլում են զենքերը և անհետանում»³⁵:

Իրադրությունը երկրում հետզհետե շիկանում է. սկսվել էին 1895-1896 թթ. համիդյան կոտորածները: Այդ ծանր օրերին Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Իզմիրյանը արևմտահայ մամուլի օրգաններում հրատարակում էր իր հորդոր դիմումը ողջ արևմտահայությանը՝ օգնել «կարոտեալ և արկածեալ ազգայնոց»: Առաջին արձագանքողներից էր Մաղաքիա Օրմանյանը: Նա 1896 թ. հունիսի սկզբներին (6-ին) դրամահավաք է սկսում Դպրեվանքի ամբողջ միաբանության մեջ՝ տուժածներին օգնելու համար: Հավաքվում է «երկու հազար երկու հարյուր վաթսունմեկ ու կես (2261 1/2) դահեկան, որն Օրմանյանն իր նամակի հետ ուղարկում է պատրիարքին՝ խնդրելով բաժանել գումարը՝ ում հարմար է գտնում և «օրհնել զմեզ հայրական օրհնութեամբ»: Ուղարկված գումարին կցված էր հանգանակությանը մասնակցած միաբանների ցուցակը, նրանց տված գումարի չափը: Ամենամեծ գումարը տվել էր Օրմանյանը՝ 540 դահեկան, ապա նրա տեղակալ Եղիշե Դուրյանը՝ 216 դահեկան: Հանգանակությանը մասնակցել էին նույնիսկ Դպրեվանքի սաները՝

³⁴ Նույն տեղում, գ. 11607:

³⁵ Նույն տեղում, գ. 11627:

վճարելով ինչքան կարող էին՝ 40, 30, 20, 10, 5 դահեկան: Դա ապագա հոգևորականներին հայրենասիրական և ազգասիրական ոգով դաստիարակելու մի դաս էր³⁶:

Արմաշի վանքի և Դպրեվանքի աշխատանքներին զուգահեռ՝ վանքի փոխվանահայրը և Դպրեվանքի տեսուչը ուշադրությամբ հետևում էր արևմտահայության հոգևոր-մշակութային կյանքի զարգացմանը: Քաջատեղյակ լինելով հոգևոր գրականությանը և հայերենի հարուստ բառապաշարին՝ նա գործնական խորհուրդներով օգնում էր իրեն հարցումներ ուղղող անձանց: Դրանց շարքում առաջինը Հովհ. ավագ քահանա Մկրյանն էր, որը ձեռնամուխ էր եղել Սաղմոսը և Ս. Գիրքը աշխարհաբար թարգմանելու ծանր ու պատվավոր գործին: Վերջինի թարգմանությունը նա համարում էր համեմատաբար դյուրին: Օրմանյանը գտնում է, որ բոլորը (ինչպես և ինքը) «համոզեալ» պետք է պաշտպան լինեն «սուրբ գիրքը աշխարհաբար ընելու» գործին, բայց կարևորը համարում է ոչ թե «բառական» (բառացի) թարգմանությունը, այլ «աւելի իմաստի թարգմանութիւն լինէր, որ աղօթողը մտաց մեջ գաղափար մը կազմեր եւ աշխարհաբարին մէջն ալ բառը իմանալով, իմաստը չիմացած չմնար»³⁷: Սաղմոսի թարգմանությունը համարելով նոր և դժվարին գործ՝ Օրմանյանը մտորում է այնպիսի կատարելությամբ թարգմանելու մասին, որ ընթերցողը չտարակուսի, թե տեքստի մեջ կան նաև աշխարհաբար և գրաբար արտահայտություններ, կամ մտածեն, որ թարգմանությունը Սաղմոս չէ, նաև նման է «բողոքական սաղմոսին»: Խորհելով, որ սաղմոսը շատ հին է, այն թարգմանված է բազմաթիվ լեզուներով, Օրմանյանը հայտնում է, որ «Սաղմոս թարգմանել է դժուար գործ կարծես չկա»³⁸: Թարգմանության ընթացքում այն անհրաժեշտ է համեմատել բնագրի հետ, հունարենի հետ, նոր ստեղծել «մեր գործածական օրինակի իմաստը», անհրաժեշտ է ստուգել՝ ո՞րն է ճիշտ, և որը՝ սխալ, իսկ եթե չեն համապատասխանում՝ որը պետք ընդունվի և հարգվի (պետք է խրթի՞ն թարգմանել, թե՞ պարզ): Ըստ Օրմանյանի՝ այդ հարցին կարող են լինել տարբեր պատասխաններ, բայց կարևոր է հարգել թարգմանչի «ուղեգիծը»: Դրանով հանդերձ՝ նա շատ հետաքրքիր դիտողություններ է անում, այնպիսիք, որ հնարավոր չէ անտարբեր անցնել դրանց կողքով նույնիսկ այսօր³⁹:

Հոգեմտավոր այդ աշխատանքները հավելյալ գործեր էին, որ կատարում էր վանքի փոխվանահայրը և Դպրեվանքի տեսուչը: Նրա հիմնական կոչումն այդ երկու հաստատությունները կարգավորելը և բարձր մակարդակի հասցնելն էր, ինչին որ ուղղում էր իր ջանքերն Օրմանյանը: Այդտեղ աշխատելու ողջ ընթացքում (1889 թ. աշնանից մինչև 1896-ի աշուն) նա ծավալում է և՛ նյութական, (գործնական), և՛ հոգևոր մեծ գործունեություն: Սկզբում վերակառուցվում են հրդեհված ուսումնարանն ու

³⁶ Նույն տեղում, գ. 11635:

³⁷ Նույն տեղում, գ. 11638:

³⁸ Նույն տեղում, գ. 11639:

³⁹ Նույն տեղում:

հյուրանոցը, ապա կառուցվում են եռահարկ ուսումնարանի նոր շենք՝ «1080 կանգուն տարածութեամբ», եռահարկ հյուրանոցի նոր շենք՝ 40 սենյակով, կիսաքանդ փուռը վերանորոգվում է, ապա կառուցվում է նոր փուռ, նոր ջրաղաց, շինվում է նոր ջրուղի, և վանքի ջուրն անցնում է երկաթե ձուլածո նոր, հաստ խողովակներով: Շերամապահության և շերամաբուծության զարգացման համար տնկվում է նոր թթաստան: Ամենակարևորը նորոգվում է Չարխափան Ս. Աստվածածնի տաճարը, ապա ավելացվում է քարուկիր զանգակատունը: Վանքը ձեռք է բերում սայլ և երկձի կառք:

Առավել ուշագրավ էին այն աշխատանքները, որոնք կատարվեցին հոգևոր-բարոյական բնագավառում. դրանցից ամենակարևորը արժանավոր հոգևորականների սերունդ պատրաստելն էր: Եռամյա կրթություն ստացած սարկավագներն ընդունում են «կուսակրօն քահանայութիւն և յաբեղայութիւն»: Այդ կապակցությամբ Դպրեվանքի տեսուչն իր ուրախությունն է կիսում պատրիարք Մ. Իզմիրլյանի հետ: Որոշ ժամանակ անց 12 ընթացավարտ աշակերտներից 7-ը վարդապետ են ձեռնադրվում, իսկ մյուսների ձեռնադրության օրը ևս նշանակվում է. դրանից հետո նրանք կարող են ծառայել ժողովրդին իբրև վարդապետ: 4 տարին ավարտած 8 աշակերտ սարկավագ են դառնում, առաջին տարին ավարտած 15 աշակերտ պետք է դպիր դառնան, ավարտած 20 աշակերտ պետք է մեկնեն զանազան վայրեր՝ ուսուցչության. նույն քանակի նորընծաներ քահանա են ձեռնադրվել: Դպրեվանք ընդունվել է մոտավորապես 90 աշակերտ, որոնց մի մասը հիվանդության պատճառով հեռացել է վանքից: Այդ ձեռքբերումների մասին Օրմանյանը սկզբում հաշիվ է տալիս պատրիարք Մ. Իզմիրլյանին. դա 1896 թ. հունիսի սկզբին էր, սակայն շատ ժամանակ չանցած՝ արդեն սեպտեմբերին, արդուկհամիդյան ճնշումներից ստիպված՝ «երկաթե պատրիարքը» հրաժարական տվեց: Ծանր իրավիճակ էր ստեղծվել ողջ արևմտահայության, առավել ևս հայ հոգևորականության, հայկական ուսումնական հաստատությունների, դրանց շարքում նաև հոգևոր ուսումնարանների համար: Նման ծանր վիճակ է ստեղծվում նաև Արմաշի Դպրեվանքի համար: Այդ մասին Օրմանյանը նամակով դիմում է պատրիարքական տեղապահ արքեպիսկոպոս Բարթողիմեոս Չամիչյանին⁴⁰: Հաղորդելով նրան Դպրեվանքի ծանր կացության մասին՝ Օրմանյանն իր միակ մխիթարությունը համարում էր սարկավագների քահանայական օձույնը, «որք դժուարին ժամանակաց մեջ մտադիր ստանձնեցին քրիստոնեական լուծը, և Տիրամբ...օրհնութեամբ պիտի լինեն անշուշտ ի ժամուն ժիր մշակներ»⁴¹: Դպրեվանքի վիճակն օրեցօր ավելի է ծանրանում. տեսուչն ստիպված էր աշակերտներին աստիճանաբար արձակել: Սկզբում նա հինգ աշակերտի ճանապարհում է Արմաշից. երկուսն աշխատանքի են

⁴⁰ Վերջինս պատրիարքական տեղապահ էր ընտրվել Ա. Արփիարյանի բնորոշումով Կ. Պոլսի «պահպանողական վարչության» ղեկավար Հովհաննես Նուրյանի միջոցով: Իր «միակ երջանկությունը սուլթանին ծառայելը» համարող Չամիչյանը տեղապահության ողջ ընթացքում ջանքեր էր թափում պատրիարք ընտրվելու համար, բայց դա նրան չհաջողվեց (տե՛ս Արարատ, 1896, N 8, էջ 381, նաև Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, էջ 395:)

⁴¹ ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, XII բաժին, գ. 11656:

մեկնում իրենց գյուղերը, երրորդը Պոլսից էր և մեկնում է իր ծննդավայրը, իսկ վերջին երկուսն ուղարկվում են Ազգային հիվանդանոց, որովհետև ծանր հիվանդ էին: Սակայն Օսմանյան կառավարությունն արդեն արգելել էր հայերի երթևեկը, այդ պատճառով հինգին էլ ուստիկանները բանտարկում են Կ. Պոլսում: Դպրեվանքի տեսուչը, իմանալով այդ մասին, շտապ նամակով դիմում է պատրիարքական տեղապահին, որպեսզի գործի դնի իր ողջ հեղինակությունը Դպրեվանքի սաներին բանտից ազատելու համար, քանի որ նրանք ոչ մի հանցանք չեն գործել և կասկածի ենթակա չեն: Արմաշի փոխվանահայրը ցանկանում է արձակել վանքի վարդապետներին, քանի որ վիճակն այնքան ծանր է, որ բոլորին տեղում պահել հնարավոր չէ: Սակայն պատրիարքական տեղապահը ոչ ոքնում է Դպրեվանքի հոգևորականներին, նաև նոր կուսակրոնություն ընդունած աբեղաներին մեկնել այլ վայրեր աշխատելու, ոչ էլ օգնում է բարելավել օրեցօր վատթարացող վանքի կացությունը: Պատրիարքական տեղապահից բացի՝ Օրմանյանը օգնություն և խորհուրդ է խնդրում ավագ քահանա Հ. Մկրյանից, նաև նախկին պատրիարք, Արմաշի անփոփոխ վանահայր Խորեն Աշրգյանից: Նրանց պատմելով վանքի ծառայողների, Դպրեվանքի աշակերտների և ուսուցիչների ծանր վիճակի մասին՝ հայտնում է, որ 18 վարդապետ և մի ամբողջ դասարանի սաներ, որոնք ստացել են «հայերեն վկայական և տաճկերեն հայտագիր», Նիկոմեդիայում բանտարկված են: Չցանկանալով վատ արտահայտվել պատրիարքական նոր տեղապահի մասին՝ Դպրեվանքի տեսուչը նախկին պատրիարքին գրում է, որ ըստ երևույթին տեղապահը չի կարողանում Դպրեվանքի վիճակը թելթևացնել, մինչդեռ ինքը պատրաստ է ցրել բոլոր աշակերտներին, միայն թե նրանք սովից չմեռնեն: Օրմանյանը խորհուրդ է խնդրում Աշրգյանից, հայտնելով, որ «յօզուտ դպրեվանաց»՝ սիրով պատրաստ է ընդունել ամեն մի խորհուրդ: Անարդյունք են անցնում ոչ միայն Աշրգյանին ուղղված նամակները, այլև պատրիարքական տեղապահ Բ. Չամիչյանին ուղղված բազմաթիվ խնդրանքները: Օրմանյանը 1896 թ. հոկտեմբերին տեղեկացնում է վերջինիս, որ կառավարությունն արգելք է դրել ցրելու Դպրեվանքի վարդապետներին և աշակերտներին, և նրանց բոլորին սպառնում է սովամահություն, իսկ ձերբակալված աշակերտները դեռևս գտնվում են բանտում: Այդ օրերին պատրիարքական տեղապահը նամակով դիտորդություն է անում Դպրեվանքի տեսչին, թե ինչու ծանր պայմաններում Խաչվերացի օրը «չորս նորընծաներ թագադրված են, առանց նկատի առնելու դրամական անձկութեան պարագան»⁴²: Թվում է՝ պատրիարքական տեղապահն անտեղյակ էր Դպրեվանքի կանոնագրին և օրենքներին, որոնց մասին հայտնում է նրան փոխվանահայր տեսուչը: Օրմանյանը գրում է, որ ձեռնադրվածները երեք տարուց ավելի սարկավազ միաբան էին և ավելի բեռ էին վանքին. «վարդապետ միաբանը միջոց կ'ստանա անձին բաւելու և վանքին

⁴² Նույն տեղում, գ. 11667:

օգնելու»⁴³: Իր վրայից հեռացնելով առանց տեղապահի գիտության ձեռնադրություն անելու նկատողությունը՝ Օրմանյանը հայտնում է, որ, Ազգային ժողովի Կենտրոնական վարչության 1892 թ. հուլիսին հաստատած կանոնադրության 8-րդ հոդվածի համաձայն, երեք դասարան ավարտածները սարկավագ են ձեռնադրվում, իսկ երեք տարի «սարկավագութիւն ընողները արեղա ձեռնադրվում»⁴⁴: Օրմանյանի հանձնարարությամբ Կ. Պոլիս է ճանապարհվում նրա տեղակալը՝ Դպրեվանքի փոխտեսուչ Եղիշե Դուրյանը. ճանապարհին՝ Նիկոմեդիայում, կառավարական պաշտոնյաները նրան կանգնեցնում են և արգելում մեկնել Կ. Պոլիս: Բարդուղիմեոս Չամիչյանին հաղորդելով այդ ամենը՝ Դպրեվանքի տեսուչն ուղղակի խնդրում և աղաչում է՝ գործադրել իր բոլոր ջանքերը, միայն թե ցրվող աշակերտները չբանտարկվեն և հասնեն իրենց հայրական օջախները, իսկ վանքի միաբան հոգևորականների համար աշխատանքի տեղ գտնել մոտակա վիճակներում: Պատրիարքական տեղապահը ոչ մի քայլ չի ձեռնարկում Դպրեվանքի գործունեությունն ապահովելու համար: Աստիճանաբար ծանրանում է Արմաշի վանքի և Դպրեվանքի վիճակը: Օսմանյան հարկային վարչությունը (տեսչությունը) փաստաթղթեր է ուղարկում վանքի փոխվանահորն ու Դպրեվանքի տեսչին (Մ. Օրմանյանին)՝ պահանջելով մի քանի տարվա չվճարված հարկ՝ 650 ոսկու պարտք⁴⁵: Տեղապահ սրբազանին ուղղած նամակին Օրմանյանը կցում է մեծ փաստաթուղթ՝ «ելեմուտքի վիճակ» և «Պարտուց ցուցակ», որտեղ մանրամասն նկարագրված էին վանքի ծանր վիճակը և իր հրաժարականի պատճառները: Նա փաստում է նաև, որ տեղի վարչական մարմինները վանքից պահանջում են անարդարացի հարկեր, անընդհատ բարձրացնում դրանց չափը, որը վճարելը վանքի համար անհնարին է:

Նույն այդ ժամանակ մոտակա թուրքական գյուղերի բնակիչները, հավատացած լինելով իրենց անձեռնմխելիության մեջ, հաշվի չեն առնում Դպրեվանքի մասնավոր սեփականատիրոջ իրավունքները, հաստում են նրան պատկանող անտառի ծառերը: Բազմաթիվ այլ փաստերով ցույց տալով վանքի անելանելի կացությունը՝ Օրմանյանը հայտնում էր պատրիարքական տեղապահին Դպրեվանքի փակման անհրաժեշտության մասին. նման ծանր սոցիալական ու քաղաքական պայմաններում հնարավոր չէ շարունակել նրա գործունեությունը. «Արմաշու վանքի մեջ Դպրեվանաց ուսումնարան դադարելով, անոր յարակից պաշտօններն ալ իրենց գոյութիւնը կը կորսնցնեն, իմ վերատեսչական և փոխվանահայրական պաշտօններս ալ միանգամայն, որով ես ալ սոյն պաշտօններէն հրաժարեալ պետք է նկատուիմ»⁴⁶: Փաստացի այդ հրաժարականից հետո երկու մեծ հավելվածներով Դպրեվանքի տեսուչն ու վանքի փոխվանահայրը ներկայացնում է այն ծանր վիճակը, որի պատճառ-

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում, գ. 11669:

⁴⁶ Նույն տեղում:

ռով նա ստիպված էր դիմել այդ քայլին: Այդ հավելվածներում մանրամասն հաշվետվություն է տված վանքի կալվածական արդյունքների, ուխտավորներից ստացած հասույթների, ապա կատարած ծախսերի մասին, որոնց մեջ մտնում են «ընդհանուր մատակարարությունը, կալուածք և շինուածք»: Ծախսերը կատարվել էին եկեղեցու, ուսումնարանի, աշխատողների աշխատավարձի, ուտեստի, կարասիների, փոխադրամիջոցների, մաքրության համար: Պատրիարքական տեղապահին ուղղված այդ փաստաթղթերում ներկայացնելով վանքի և ուսումնարանի ծանր կացությունը, Օրմանյանը մի քանի առաջարկություններ է անում՝ անհրաժեշտ համարելով «ուսումնարանը փակել, լուրջ վանքի պահպանութեան չափ վարդապետ և սպասաւոր պահել»⁴⁷: Նույն այդ փաստաթղթում Օրմանյանն ընդգծում է, որ նման պայմաններում անգամ «Դպրեվանաց ներքին կենցաղը պահուած է միշտ կատարեալ վանական ձևին մեջ, միաբանութիւն եւ դպրոցականութիւն առհասարակ իբրեւ մի վանական մարմին նկատուած են»⁴⁸: Պատրիարքական տեղապահին ուղղված նամակներն ու հաշվետվությունները մնում են անարձագանք և անարդյունք, այդ պատճառով Օրմանյանը ջանքեր է գործադրում Կ. Պոլիս մեկնելու թույլտվություն ձեռք բերելու համար: Որպեսզի փոխտեսուչ Ե. Դուրյանի նման իրեն էլ կառավարական պաշտոնյաները չկանգնեցնեն Նիկոմեդիայում, նա խնդրանք նամակներ է հղում Հովհ. Մկրտչյանին, պատրիարքական տեղապահին, ապա Բ. դրանը մոտ կանգնած և հեղինակություն վայելող հայ աշխարհական անձնավորություններին: Արխիվային փաստաթղթերը լռում են, թե ինչ միջոցներով և ում օգնությամբ է Օրմանյանին հաջողվում 1896 թ. օգոստոսին հասնել Կ. Պոլիս: Այնտեղ ևս նրա ջանքերն արդյունք չեն տալիս: Փակվում է Դպրեվանքը: Դադարեց այդ հոգևոր ուսումնական հաստատության գործունեությունը, որն զգալի դեր խաղաց արևմտահայ հոգևոր-մշակութային կյանքում:

Օսմանյան մայրաքաղաքում հայ ազգային կյանքը և մթնոլորտը խիստ շիկացած էր. ճիշտ է, աստիճանաբար թուլացել էին 1895- 1896 թթ. համիդյան կոտորածները, սակայն դրա հետևանքները դեռ երկար զգացվեցին արևմտահայության մեջ: Հայոց պատրիարք Մ. Բզմիրյանի հրաժարականից հետո պատրիարքական տեղապահ ընտրված Բարթոլոմեոս Չամիչյանից դժգոհ էին բոլորը, այդ պատճառով Ազգային Խառը Ժողովը և Կրոնական Ժողովը դադարած են համարում նրա գործունեությունը: Որոշ ժամանակ անց՝ 1896 թ. վերջին, Հայոց Ազգային ժողովի անդամ Հարություն (Արթին) Տատյանի և բանտում գտնվող Աբիկ Ունձեանի սատարումով Մաղաթիա Օրմանյանն ընտրվում է Կ. Պոլսի հայոց պատրիարք: Նրա առջև բացվում է գործունեության լայն ասպարեզ:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում, գ. 11671:

**ДЕЯТЕЛЬНОСТЬ МАГАКИИ ОРМАНЯНА В ЭЧМИАДЗИНСКОЙ
СЕМИНАРИИ ГЕВОРКЯН И ДУХОВНОЙ ШКОЛЕ АРМАША (1887-1896 ГГ.)**

КОСТАНДЯН Э. А.

Резюме

В 1886 г. католикос Макар Тегутци пригласил в эчмиадзинскую семинарию Геворкян на преподавательскую работу армянского религиозного деятеля – епископа Магакию Орманяна.

Царское правительство выразило недовольство армянскому католикосу в связи с тем, что в стенах семинарии преподает иностранный подданный, конкретно, турецкоподданный М. Орманян, и в 1888 г. последний вынужден был покинуть Эчмиадзин. В 1889 г. М. Орманян стал инспектором духовной школы в Армаше.

Воспитанники М. Орманяна стали видными деятелями своей эпохи. На протяжении 1889-1896 гг. школа с честью справлялась с возложенной на нее миссией. Однако турецкое правительство чинило всяческие препятствия, облагая монастырскую школу неимоверно высокими налогами, в результате чего в 1896 г. школа как один из важных западноармянских центров религиозно-культурного развития была закрыта.